## Հանձնաժողովի՝ ընտրողների հոսքը կարգավորող անդամի գործառույթները
## *(Ընտրական օրենսգիրք՝ հոդված 64, 65)*

- Կարգավորե՛ք ընտրական տեղամաս մտած ընտրողների հոսքը:

- Ընտրողին խնդրե՛ք ներկայացնել Վրաստանի քաղաքացու ինքնությունը հավաստող վկայականը կամ Վրաստանի քաղաքացու անձնագիրը:

- Ուլտրամանուշակագույն լապտերով ստուգե՛ք, թե չունի արդյոք ընտրողը նշմարում, և, երբ կհամոզվեք, որ ընտրողը չունի նշմարում, նրան տվե՛ք քվեարկությանը մասնակցելու իրավունք:

- Հետևե՛ք՝ քանի ընտրող է կանգնած ընտրողի համար հատկացված գրանցման սեղանի մոտ: Եթե գրանցման սեղանի մոտ երկուսից ավելի ընտրող կա կանգնած, ժամանակավորապես դանդաղեցրե՛ք քվեարկության շենք հերթական ընտրողի մուտքը:

- Ընտրողին ուղղորդե՛ք դեպի այն գրանցման սեղանը, որին պատկանում է ընտրողների ցուցակում ընդգրկված՝ նրա ազգանվան առաջին տառը:

## ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈ՜ՒՆ

- Եթե ընտրողը չունի Վրաստանի քաղաքացու ինքնությունը հավաստող վկայական կամ Վրաստանի քաղաքացու անձնագիր, բացատրե՛ք, որ նա չի կարող մասնակցել քվերակությանը, և խնդրե՛ք լքել ընտրական տեղամասը:

- Եթե ուլտրամանուշակագույն լապտերով նշմարումը ստուգելիս պարզվի, որ ընտրողն արդեն ունի նշմարում, նրան արգելվում է մասնակցել քվեարկությանը: Ընտրողի ով լինելը տեղեկացրե՛ք հանձնաժողովի նախագահին: Ընտրողին խնդրե՛ք լքել ընտրական տեղամասը:

- Այն ընտրողը, որը «ֆիզիկական վիճակի», մասնավորապես, վերին վերջավորություններ չունենալու պատճառով չի կարողանում ինքնուրույն իրականացնել քվեարկության ընթացակարգերը, չի անցնում նշմարման ստուգման և նշմարման ընթացակարգերը: